# Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 712-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

_

----- ------------2020 թվականի N      -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 712-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ  է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» N 712-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) «14.2» ծածկագրով տողի՝

ա. 3-րդ սյունակում «դրամ» բառից հետո լրացնել «կամ 301 216 դրամ» բառերը,

բ. 4-րդ սյունակում լրացնել հետևյալ ենթակետերը.

«1) 91 216 դրամը հաշվարկվում է անվճար հիմունքներով (օտարերկրյա պետության լրացուցիչ ֆինանսավորմամբ) ընդունելության շրջանակներում ուսման գործուղվածներին.

2) 301 216 դրամը հաշվարկվում է արտոնյալ հիմունքներով (առանց

օտարերկրյա պետության լրացուցիչ ֆինանսավորման) ընդունելության շրջանակներում ուսման գործուղվածներին:».

2) «14.3» ծածկագրով տողի՝

ա. 3-րդ սյունակում «դրամ» բառից հետո լրացնել «կամ 292 973 դրամ» բառերը,

բ. 4-րդ սյունակում լրացնել հետևյալ ենթակետերը.

«1) 82 973 դրամը հաշվարկվում է անվճար հիմունքներով (օտարերկրյա պետության լրացուցիչ ֆինանսավորմամբ) ընդունելության շրջանակներում ուսման գործուղվածներին.

2) 292 973 դրամը հաշվարկվում է արտոնյալ հիմունքներով (առանց օտարերկրյա պետության լրացուցիչ ֆինանսավորման) ընդունելության շրջանակներում ուսման գործուղվածներին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: